ԵԴ2/0841/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

08-ը փետրվարի 2024թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով «Շին նախագիծ» ՍՊ ընկերության հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑԻ

2024 թվականի հունվարի 31-ին Դատարան է մուտքագրվել «Շին նախագիծ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Լուսինե Գրիգորյանի հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ 04.01.2024թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղարի պայմանագիրը միակողմանի /ամբողջությամբ/ լուծելու մասին թիվ Ե 40/6-33 ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Նշված հայցադիմումի հիման վրա կազմված գործը մակագրվել է Դատարանի դատավոր Լ. Սաղոյանին 31.01.2024թ.-ին, իսկ դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 05.02.2024թ.-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Շին նախագիծ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ 04.01.2024թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղարի պայմանագիրը միակողմանի /ամբողջությամբ/

լուծելու մասին թիվ Ե 40/6-33 ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 2024 թվականին մարտի 22-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Լ. ՍԱՂՈՅԱՆ**